ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 7 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1.Մասնագիտական էթիկայի կանոնի խախտման բացակայության հիմքով դադարեցնել Հանձնաժողովի նախաձեռնությամբ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատողներ Արմինե Բեգլարյանի և Արուսյակ Բախշյանի մասով հարուցված գործի քննությունը:

2.«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատողներ Արմինե Բեգլարյանին և Արուսյակ Բախշյանին՝ առաջարկել իրենց մասնագիտական գործունեության մեջ հետևողականորեն ապահովել բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնները և շարունակաբար զարգացնել պացիենտների, նրանց ընտանիքի անդամների, օրինական ներկայացուցիչների, կոնտակտային անձանց հետ հաղորդակցման հմտությունները՝ կյանքի դժվարին պայմաններում կամ հուզական վիճակներում հայտնված անձանց հետ կոնֆլիկտային իրավիճակների ստեղծման հնարավորությունները բացառելու նպատակով: